№ 25 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29 — 1896 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29 № 25

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆՈՒՄ:

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական կեանքը. Շանտաժով վարակված մամուլ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Համակրելի կարգադրութիւն. Նամակ Սղնախից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Երիտասարդ Թիւրքիա. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.— ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ֆինլանդիայից.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

—

Անցքերը հետեւում են միմեանց կայծակի արագութեամբ: Մոռացվում է մահմետական արեւելքը իր յաւիտեան անբուժելի վէրքերով, իսկ մարդկութեան ուշադրութիւնը այդտեղից տեղափոխվում է գեղեցուեստի կլասիական հայրենիքը—Իտալիա: Նա ամբողջովին սուզի մէջ է: Բարատիերի կամենում էր յաղթահարել կիսավայրենի եթովպացիներին, բայց դրա փոխարէն ուժգին ցնցումներով ողողեց իր հայրենիքը: Նա, որ երէկ մեծ պետութիւնների շարքում վճիռներ էր արձակում միջազգային հարցերի մէջ, որ կարող էր „այո“ և „ոչ“ արտասանել իբրև հեղինակաւոր մի մարմին, այսօր կրում է իր ճակատի վրա ասատիկ պարտութեան դառնութիւնը: Կրիսպի այժմ յուսահատված է, հասարակաց զայրոյթից ազատվելու միակ միջոց է որոնում իր հրաժարականի մէջ: Վրդովված ժողովուրդը զայրոյթի ցոյցեր է անում: Իտալիայի քաղաքականութեան ղեկավարի դէմ այնքան ասատիկ է ատելութիւնը, որ նոյն իսկ այս սուգի մէջ փողոցներում լսվում են բացականչութիւններ. „կեցցէ՞ Մէնէլիկ“: Մէնէլիկը, նա, որ ջարդել է իտալական զօրքերը, որ ազգային սուգի պատճառն է..

Ապօրէն, անմիտ աշխարհակալութիւնների քաղաքականութիւնը այսպէս է դատապարտվում: Նրանք, որոնց յանձնված էր ազգերի վիճակը, տարիների ընթացքում, մոռացած ամեն ինչ, միայն սուլիների բազմութեան մէջ էին տեսնում փառքի, երջանկութեան առհաւատչեան, այժմ փախչում են ասպարէզից, թողնելով երկիրը սուգի, արտասուքների և սարսափելի աղքատութեան մէջ:

Իտալիայի համար լաւ դաս էր դա: Բայց ի՞նչ են մտածում նրա ընկերակիցները: Ի՞նչպէս է իրան զգում Գերմանիան, նա, որը արտաքսելով իր քաղաքականութիւնից մարդասիրութեան, արդարութեան և հանրամարդկային շահերի հասկացողութիւնները, միայն և միմիայն արիւնի և երկաթի քաղաքականութեան մէջ է որոնում իր ոյժը, մեծութիւնը: Արդեօք չի գայ և մի այնպիսի օր Գերմանիայի համար, երբ փողոցներում ժողովրդի այրված և մորմոքված սրտից դուրս կը թռչեն հառաչանքներ, ոչ միայն զայրոյթի, այլ և թշնամուն երկար կեանք մաղթող հառաչանքներ, ինչպէս այժմ է տեղի ունենում Իտալիայում:

Ազգերի կեանքը օրերով չէ հաշվում: Վաղը, միւս օրը մի ազգի համար տարիների մի երկար շարք կարող է պարունակել: Եւ եթէ այսօրվայ օրը դեռ աջող է անցնում, մի՞թէ նոյնը կարող է լինել և վաղվայ համար: Քաղաքակիրթ մարդկութիւնը այժմ այլ ևս իր երջանկութեան համար արիւն չէ պահանջում: Նրան զօռով տանում են դէպի այդ նպատակը: Բայց Իտալիայի ժողովուրդը այդ մարդկութեան մի փոքրիկ մասնիկն է, որ իր ցոյցերով հակացնում է թէ պատերազմական փառքը, թոյլ ազգերից ոյժի իրաւունքով հողեր խլելը չէ կարող բաւականութիւն տալ այժմեան ժամանակին:

Անգլիական պարլամենտը իր նիստերն է շարունակում հանդարտ, առանց որ և է միջադէպի: Լորդ Սալիսբիւրի դադարել է պզպեղով համեմած ճառեր արտասանելուց. միջազգային քաղաքականութեան ասպարէզում իր կրած մի շարք պարտութիւնները չեն յուսահատեցնում ազնիւ մարքիզին: Ցենվելով պարլամենտի մեծամասնութեան վրա, նա հնարաւոր է դարձրել մի պատուաւոր նահանջումն: Եւ այժմ նրա գործն է մեղմացնել, մինչև իսկ ոչնչացնել իր նախկին որոտընդոստ ճառերը: Սակայն դէպք չէ եղել, որ Ջոն-Բուլը որ և իցէ տեղ մոռացած լինի իր շահերը: Այդ շահերի համար նա միջոցների խտրութիւն դնել չէ իմացել: Կարող է նա այսօր ուրանալ այն, ինչ երէկ է արել և վաղը գնալ իր թշնամու հետ համբուրվել, միայն թէ շահի ակնկալութիւն ունենայ:—Ճիշդ է, նրան չեն հաւատում, նրանից փախչում են: Բայց ի՞նչ փոյթ: Չէնց դրա համար է մեծարվում քաղաքական աշխարհի մէջ „խորամանկ Ալբիոն“ անունով:

Իսկ Ֆրանսիան, հանրապետական լուսաւոր Ֆրանսիան:—Մի հարցրէք: Նա սկանդալների հայրենիք է դարձել:

ՇԱՆՏԱԺՈՎ ՎԱՐԱԿՎԱԾ ՄԱՄՈՒԼ

—

Այն անախորժ դէպքը, որ նորերս տեղի է ունեցել Պետերբուրգում և—ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները—Պետերբուրգի ամբողջ հասարակութեան յուզմունքի և խօսակցութեան առարկայ է դարձել, առիթ է տալիս մեզ նորից խօսել շանտաժային մամուլի մասին:

Պետերբուրգի „Гражданинъ“ լրագրի խմբագիր իշխան Մէշչէրսկի, ինչպէս ինքն հրատարակել է իր լրագրի մէջ, ենթարկվել է ծեծի երկու երիտասարդների կողմից այն պատճառով, որ նա տպել է իր լրագրի մէջ այդ երիտասարդների ծերունի հօր—պետական խորհրդի անդամ Պոլովցեվի՝ պատիւը և անունը արատաւորող մի յօդուած:

Տարակոյս չը կայ, որ արատաւորված պատիւը՝ բռունցքների և փայտի հարուածների միջոցով վերականգնելու ասիական ոգեղ սովորութիւնը վերին աստիճանի պախարակելի է. սակայն ինչ է՞ պատճառը—հարցնում է „Биржевыя Вѣдомости“ լրագիրը—որ այդ վայրենի և վրդովեցուցիչ վարմունքը (ծեծին դիմելը) ոչ մի տեղ և ոչ ոքի կողմից չէ պախարակվում: ոմանք փորձում են վրդովմունք արտայայտել, բայց իմանալով գործի մանրամասնութիւնը, հանդարտվում են և մտածում. „տեղն է, արժանի է, հացագործներ և կօնդիտէրներ, երշիկ շինողներ, մսավաճառներ, լուացք և լուացքի նրման գործեր կատարողներ, պանդոկ և հիւրանոց պահողներ, րէստորացիայի և կաֆէի տէրեր, ճաշարանատէր, գինեվաճառներ, կառապաններ, թիավարներ, սպասաւորներ, խնամակալուհիներ, և ուրիշ մանր մունր գործեր,—բոլորն էլ կանայք:

Աւելի բարձր զբաղմունքներով պարապվողներ էլ չատ կան. օրինակի համար՝ տպագրական, փայտագրական (ксилографія), լուսանկարական, վիմագրական գործով պարապողներ, նաև դատաստանական և ուրիշ նոյնանման տեղերից արտագրելու համար գործ են վերցնում, քարտէզներ են գծագրում: Կարելի էր ամեն այս արհեստաւորների մասին առանձին առանձին տեղեկութիւններ տալ, բայց տեղը և ժամանակը սուղ է, ուստի անցնենք: Միայն մէկ խօսքով յիշենք, որ հազարաւոր կանայք գործում են ֆաբրիկաներում:

VII Առևտրական գործով զբաղվող կանայք: Մանուֆակտուրական, կօլօնեալ ապրանք և ուտելիքներ վաճառելով պարապվողներ, գինեվաճառներ, գրավաճառներ և թղթավաճառներ, գեղարաններում և գեղավաճառանոցներում գործողներ, դրամատներում, ապահովագրական գրասենեակներում, ագենտուրներում և կոմիսիոնական գործերում ու նոյնանման գրասենեակներում աշխատող կանայք խիստ չատ են Ֆինլանդիայում:

Խիստ լաւ և հաճելի տպաւորութիւն է ստանում մարդ, երբ Ռուսաստանի ներքին նահանգներից գալիս է այստեղ: Զինուորներով և այլ և այլ ծառայողներով լի դիւանատները և բանկերը տեսնելուց յետոյ, այստեղ գնալով վարչական պաշտօնատեղեր, բանկեր, պօստը՝ տեսնում է մաքուր հագնված կանանց և աղջիկներին, որոնք տղամարդկանց տեղերը յափշտակել են և աւելի քիչ ռոճիկով մի և նոյն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՖԻՆԼԱՆԴԻԱՑԻՑ

—

Հելսինգֆօրս, փետրվարի 12-ին

Շատ քիչ են այն զբաղմունքները, որոնք վերապահված են միայն արական սեռին. բայց կամաց կամաց այդ արտօնութիւնն էլ աշխատում են խլել տղամարդկանց ձեռքից: Սակայն կան և այնպիսի գործեր էլ, ուր կանանցն է առանձնայնորհութիւնը և տղամարդիկ այդ բաներով չեն զբաղվում: Թէև չատ էլ երկար չի լինի, բայց և այնպէս թոյլ տուէք հաշիւ տալ ձեզ, կառավարութեան վիճակագրութեան փաստերի վրա հիմնվելով, այն մասին՝ թէ ինչով են զբաղված այս երկրի կանայք:

I Տնային աշխատանքով զբաղված են գրեթէ ամեն տեղ և առաջին տեղը բռնում է մանելը. մանում են տեղային բուրդ, քաթան ու կանեփ, այլ և ներմուծած բամբակ: Ցետոյ գալիս է գործ ու կարպետ հիւսելը և կար կարելը: Ծախու են հանում, օրինակի համար՝ քաթանի, կանեփի, բուրդի և բամբակի թել, բամբակի հիւսուածքներ, գոտգեր, վերմակներ, գոգնոց, սրբիչոց, թաշկինակ, շալ, բամբակախառն բրդեայ տրիկօ, լէնտ, գուլբայ, վարագոյր, կօշկի կապ, ձկնորսի գործիքներ և այլն և այլն: Այս բաները բոլորը տներում են շինվում կանանց ձեռքով: Կարելի էր առաջ բերել, թէ ուր ինչ է պատրաստվում և որքան կանայք ինչ մասնաւոր գործով են զբաղված, բայց թուերը և մերկ անունները ձանձրացուցիչ լինելով՝ մի կողմ ենք թողնում: Միայն մի հանգամանք պէտք է յիշենք, որ բացի վերև յիշատակված ընկերութիւններից եղել են և կան չատ մասնաւոր անձինք, տղամարդիկ և կանայք, որոնք քաղաքներում և գիւղերում օրինակելի արհեստանոցներ են բացել կանանց՝ տնային աշխատանքներ ու ինտեսագործութիւն սովորեցնելու: Մանաւանդ կալուածատէրերն են առաջինը եղել, որ այդպիսի դպրոցներ են հիմնել և մինչև այսօր էլ օգնում են տարեկան նպաստներով: Հարկաւ, աւելի մեծ է այն ձեռագործական—դպրոցների թիւը, որ հիմնված են համայնքների կողմից: Տնային աշխատանքի համար եղած դպրոցների թիւը 65 է:

II Ֆինլանդիայի կանանց մեծ մասը զբաղված է դաշտային գործերով արդէն չատ հին ժամանակներից ի վեր: Տղամարդկանց չափ կանայք ու աղջիկներն էլ աշխատում են դաշտում: Այս երկրի հողը չատ պինդ է, մէջը չատ արմատներ կան, միշտ խոնաւ է, ուրեմն ֆինը պէտք է չատ աշխատի, որ իր ապրուստը կարողանայ ճարել: Ցմեռը վեց ամսից պակաս չէ լինում. ամառը խիստ կարճ: Գարունքին մեծ ցրտեր են լինում և փչացնում են ցանքերը. իսկ մի քիչ ուշ ցանողները հանդիպում են այնան ցրտերին և վնասվում: Այդ պատճառով թէ մարդ, թէ կին ստիպված են աշխատել դաշտում: 1890 թուին կային 8,580 կալուածատէր կանայք, 2,516 կալաւոր կանայք, 4,093 հողատէր գիւղացիներ և 1,538 արքունի հողի վրա ապրող երկրագործ կանայք: 76,857 կանայք վարձված էին դաշտային գործերի համար: Ընդհանրապէս 548,498 ֆինն կին հող է մշակում:

III Կաթնագործութիւնը չատ նշանաւոր տեղ է բռնում Ֆինլանդիայի կեանքում, և դարձեալ կանայք են, որ այդ գործի ծանրութիւնը կրում են: Թէ որքան կովեր են կթում, որքան կարագ, կոգի, տեսակ տեսակ պանիր են շինում և ծախու հանում թէ այստեղ՝ իրանց հայրենիքում և թէ արտասահման տանում,—այդ ամբողջ աշխարհը գիտէ: «Զուլսոնսկոյէ» իւղը մաքուր, քաղցրահամ, անարատ, անխառն, այստեղ է պատրաստվում կանանց ձեռքով: Վեց տարի է ամեն օր սեղանի վրա կարագ ունենք, և ոչ մի անգամ մէկ հատ զզուելի մաղ չենք տեսել կարագի մէջ. էլ չենք խօսում ուրիշ բաների մասին, որ մեր հայերի և մանաւանդ թուրքերի պատրաստած կարագի, կաթի, մածնի մէջ է լինում անթիւ և անհամար: Պետերբուրգի գործածած կարագի և կամենեղէնի մեծ մասը Ֆինլանդիան է տալիս: Մեծ քանակութեամբ կարագ գնում է այստեղից մանաւանդ Անգլիա: Կաթնագործական դպրոցներ կան այստեղ, և բոլոր գործողութիւնները մեքենաներով են կատարվում հեշտ ու մաքուր:

IV Թռչնաբուծութիւնով զբաղված են նոյնպէս կանայք: Հաւ, վառեակ, բադ, ձու, սագ, հնդկահաւ աճեցնում են թէ բնական, թէ արուեստական կերպով ու մեծ օգուտ տեսնում:

V Մեղու են պահում ու լաւ մեղր ու մոմ ստանում:

VI Պարտիզպանութիւնը չատ ծաղկած է, չը նայելով երկրի ցուրտ ու անյարմար բնութեան: Բանջարեղէն և տեսակ տեսակ թուփերի պտուղներ (ягоды) չատ են մշակում ու զանազան քաղցրաւէնիք շինում: Այս բոլորը գիւղատնտեսական ճիւղերն են:

Գանք հիմա տեսնենք, թէ ինչ արհեստներով են պարապում Ֆիննուհիները: Առաջին տեղը բռնում են կար կարողները՝ 3,508 հոգի. սրանցից 1,057 գիւղերումն են և 2,451 քաղաքներում: Մօդային շորեր պատրաստողներ, կանանց պալտօ կարողներ, դերձակուհիներ, մեքենայով ասղնագործողներ, կօշկակարներ, կաչեգործներ, թամբագործներ, ձեռնոց շինողներ, ժապաւէն պատրաստողներ, կազմարարներ, գլխարկ շինողներ, զայթան գործողներ, ներկարարներ, վրձին կապողներ, կոտրած բաներ կարկտողներ, ատաղձագործներ, իւղաներկներ, պատ թղթողներ, ապակեգործներ, սղնձագործներ, թիթեղագործներ, հովանոցագործներ, ժամագործներ, բրուտներ, ոսկերիչներ, ծամեր հիւսողներ, բաղնիսպանուհիներ, հացագործներ և կօնդիտէրներ, երշիկ շինողներ, մսավաճառներ, լուացք և լուացքի նրման գործեր կատարողներ, պանդոկ և հիւրանոց պահողներ, րէստորացիայի և կաֆէի տէրեր, ճաշարանատէր, գինեվաճառներ, կառապաններ, թիավարներ, սպասաւորներ, խնամակալուհիներ, և ուրիշ մանր մունր գործեր,—բոլորն էլ կանայք:

Աւելի բարձր զբաղմունքներով պարապողներ էլ չատ կան. օրինակի համար՝ տպագրական, փայտագրական (ксилографія), լուսանկարական, վիմագրական գործով պարապողներ, նաև դատաստանական և ուրիշ նոյնանման տեղերից արտագրելու համար գործ են վերցնում, քարտէզներ են գծագրում: Կարելի էր ամեն այս արհեստաւորների մասին առանձին առանձին տեղեկութիւններ տալ, բայց տեղը և ժամանակը սուղ է, ուստի անցնենք: Միայն մէկ խօսքով յիշենք, որ հազարաւոր կանայք գործում են ֆաբրիկաներում:

VII Առևտրական գործով զբաղվող կանայք: Մանուֆակտուրական, կօլօնեալ ապրանք և ուտելիքներ վաճառելով պարապվողներ, գինեվաճառներ, գրավաճառներ և թղթավաճառներ, գեղարաններում և գեղավաճառանոցներում գործողներ, դրամատներում, ապահովագրական գրասենեակներում, ագենտուրներում և կոմիսիոնական գործերում ու նոյնանման գրասենեակներում աշխատող կանայք խիստ չատ են Ֆինլանդիայում:

Խիստ լաւ և հաճելի տպաւորութիւն է ստանում մարդ, երբ Ռուսաստանի ներքին նահանգներից գալիս է այստեղ: Զինուորներով և այլ և այլ ծառայողներով լի դիւանատները և բանկերը տեսնելուց յետոյ, այստեղ գնալով վարչական պաշտօնատեղեր, բանկեր, պօստը՝ տեսնում է մաքուր հագնված կանանց և աղջիկներին, որոնք տղամարդկանց տեղերը յափշտակել են և աւելի քիչ ռոճիկով մի և նոյն

ժանի է, որովհետև, — շարունակում է լրագիրը—այն դեպքը, որ առիթ է տուել այդ տեսակ կոպիտ վարմունքի, պատկանում է այն ամբիծալի զեղծումների շարքին, որոնք կատարվում են տպագրական խոսքի միջոցով, որոնցից մեծ վնաս է կրում հրապարակախոսութիւնը և որոնց դեմ յարձակվում են բոլոր արժանաւոր զրողները։"

Ահա դեպքի մանրամասնութիւնը։ Իշխան Մեշչերսկի ապել է իր լրագրում մի յօդուած, որի մէջ պետական խորհրդի անդամ Պոլովցեվ ամբաստանվում է իբրև „ազատամիտ"։ Ի հարկէ, այդպիսի մի ամբաստանութիւն ոչ նախատական է և ոչ զարհուրելի, բայց բանը նրանումն է, որ Մեշչերսկի հաղորդում է իր յօդուածի մէջ այդ անձի մասնաւոր խօսակցութիւնը, այն ևս աղաւաղված ձևով։ Այդպիսի վարմունք, նոյն իսկ ամենալայն ազատութիւն վայելող երկիրների մէջ, համարվում է պարզապէս գողութիւն, երբ մի անձի մասնաւոր խօսակցութիւնը հաղորդվում է նրան վնաս հասցնելու նպատակով։ Ինչպէս չէ կարելի, առանց թոյլատրութեան, օգուտ քաղել մասնաւոր նամակներից, նոյնպէս չէ կարելի օգուտ քաղել և մասնաւոր խօսակցութիւններից։ Առանց թոյլատրութեան, դիտմամբ, մէկին վնասելու նպատակով, հրատարակել նրա մասնաւոր խօսակցութիւնը „այդ սորութիւն է և դաւաճանութիւն, հաւասար լրտեսութեան և քսութեան"—ինչպէս շատ ճիշդ նկատում է Պետերբուրգի լրագիրը։

Եւ ահա իշխան Մեշչերսկի իր յօդուածի մէջ հաղորդում է Պոլովցեվի մի մասնաւոր խօսակցութիւնը, որից երևում է, որ իբր Պոլովցեվ պախարակել է անցած թագաւորութիւնը և համակրութիւն է ցոյց տուել Ալէքսանդր II-ի ռէֆորմներին։ Դրա հետ միասին Մեշչերսկի վերագրում է „ազատամիտ բարձրաստիճան պաշտօնեային" ամենասոր բարոյական յատկութիւններ։

„Իշխան Մեշչերսկու կեղտոտ, ձևի և նպատակի կողմից զզուելի յօդուածը—ասում է „Биржевыя Вѣдомости"—կարդում են այն անձի երկու զաւակները, որի դէմ ուղղված էր այդ յօդուածը։ Այդ երիտասարդները, որոնցից մէկը ուսանող է, գնում են և բաւարարութիւն պահանջում Մեշչերսկուց և երբ վերջինս մերժում է՝ հարուածները թափվում են նրա վրա... Մենք թողնում ենք հասարակութեան դատել թէ իշխան Մեշչերսկու և թէ իրանց հօր պատիւը պաշտպանող երիտասարդների վարմունքը։ Պէտք է ենթադրել, որ ռուս հասարակութիւնը այնքան հասունացած է, որ չի խառնի հրապարակախօսութեան մերկացնող դերը՝ պրոֆէսիոնալ մատնիչի ամբիծալի վարմունքի հետ, մատնիչի, որ օգուտ է քաղում ազգային խօսքից՝ ամեն մի ազատ և անկախ կարծիք մեռցնելու համար։ Բայց չէ կարելի համակրել և բռունցքի ոյժով գործելու եղանակին։ Ընդհանուր արհամարհանք դէպի այդպիսի հրապարակախօսներ, ինչպէս իշխան Մեշչերսկի, և ընդհանուր յարգանք դէպի բարոյական պարզը սրբութեամբ կատարող մամուլը,—ահա ամենալաւ զսպիչ սանձը այդպիսի անձանց համար են հանդիսանում"։

Մենք մեր կողմից միանգամայն համաձայնում ենք Պետերբուրգի լրագրի առաջարկած միջոցին.—շանտաժիստներին, գրական պոռնիկներին, մատավաճառներին, տպագրական խօսքը արատաւորող, կեղտոտող զրողներին զսպելու ամենալաւ միջոցը՝ արհամարհանքն է։ Այդ նոյն միջոցն է, որ մենք գործ ենք դնում հայոց փողոցային մամուլի և հայոց գրական շանտաժիստների դէմ։ Կեղտոտութիւններից պէտք է երես դարձնել, և ոչ թէ նրանցով զբաղվել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿՐԵԼԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Մոսկվայի զինուորական շրջանի զօրքերի հրամանատար գէներալ Կոստանդայի արած մի նոր կարգադրութիւնը մեծ խորհրդածութեան նիւթ է դարձել ռուսաց մամուլի և հասարակութեան մէջ։

Ինչպէս յայտնի է, ոչ միայն Ռուսաստանում, այլ և Եւրոպայի մի քանի պետութիւնների մէջ, օֆիցէրները և ասպիճան ունեցող զօրականները շատ կոպիտ, անքաղաքավարի կերպով են վարվում հասարակ զինուորների հետ, իսկ ոմանք թոյլ են տալիս իրանց՝ մինչև անգամ ծեծել, բռունցքով հարուածներ տալ նրանց։

Գէներալ Կոստանդա գտնելով, որ ծեծելու այդ սովորութիւնը ոչ միայն անարժան, այլ և ապօրէն մի գործ է, մի շրջաբերական է հրատարակել իր իշխանութեան ենթակայ զինուորական շրջանի համար, որի մէջ, ի միջի այլոց ասված է.

«Զօրքերի գլխաւորների առանձին ուշադրութիւնն եմ հրաւիրում այն բանի վրա, որ նրանք էլ են պատասխանատու՝ թոյլ տալով ապօրինի վարմունք ստորադրեալների հետ և յոյս ունեմ, որ ծեծելու սովորութիւնը արմատախիլ կը լինի իշխանութեան ձեռք առած ամենավճռական միջոցներով։»

Առաջ բերելով այդ շրջաբերականը, Պետերբուրգի մի լրագիր ասում է. «Այո, ծեծելու սովորութիւնը, բռունցքով գործելու սովորութիւնը ցոյց է տալիս ամենից առաջ լիակատար արհամարհանք դէպի մարդկային անձնաւորութիւնը, իսկ յետոյ դէպի օրէնքը, որ խիստ կերպով արգելում է այդպիսի վարմունքը մարդու հետ։ Ոչ մի բանով չէ կարելի արդարացնել այդ սովորութիւնը։ Ինչպէս զօրքի մէջ, որտեղ նա գործադրվում է կարգապահութեան պատրուակով և որտեղ, ինչպէս նկատում է իր շրջաբերականի մէջ գէնէրալ Կոստանդա, նա, իրողապէս, միայն ոճիր է, նոյնպէս և զօրքից դուրս, մեր ժողովրդական և հասարակական կեանքում, նա ոչ միայն ճնշող ազդեցութիւն է գործում զոհի վրա, այլ և սարսափելի կերպով անբարոյականացնում է իրան ծեծողին... Սովորութիւն է... ծեծելը։ Ուրիշ խօսքերով, սովորութիւն՝ ոչ միայն անամօթութիւն, այլ և ապօրինութիւն գործելու և օրէնքի պատուէրների տեղ՝ բռունցքը գործ դնելու։»

Տարակոյս չը կայ, որ այդպիսի մի հեղինակաւոր պատուէր, այդպիսի մի հրաման, որ դուրս է գալիս Մոսկվայի զինուորական հրամանատարի բերանից և անխնայ դատապարտում է ծեծելու վատ և ագեզ սովորութիւնը, չատով վերջ կը դնի այդ ապօրինութեան և օֆիցէրները կը սովորեն յարգել մարդկային անձնաւորութիւնը։

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽՑ

Փետրվարի 20-ին

Մեր քաղաքային ինքնավարութիւնը դեռ չէ կազմակերպված։ Տարվայ սկզբներից կազմված և յայտարարված է այն անձերի ցուցակը, որոնք, օրէնքի հիման վրա, պէտք է ընտրեն ձայնաւորներ։ Ցոյս կայ, որ մինչև ապրիլի վերջը քաղաքագլուխ ունենանք։ Խորհուրդ ենք տալիս հասարակութեանը, որ աչքի առաջ ունենան ընդհանուրի օգուտը և ընտրեն մի այնպիսի հմուտ և քանիմաց անձն, որը համապատասխան լինի այդ պաշտօնին։ Ինչպէս իմանում ենք, քաղաքագլխի համար ի նկատի ունեն տեղացի Ն. Տէր-Մատթէոսեանին, որը Լազարեան ճեմարանի աւարտողներից է։

Անցեալ 1895 թվի ընթացքում համալսարան մտնելու քննութիւն են տուել 59 անձինք իգական սեռից. մի կին սկզբնական քննութիւն տուեց բժշկական ֆակուլտէտը մտնելու. մի կին վերջնական քննութիւն տուեց իբր դաստիարակապետ. մի կին բժշկականութեան և վիրաբուժութեան բժշկապետի աստիճան ստանալու համար աջողութեամբ պաշտպանեց իր դիսերտացիան։

Ջեռագործի բարձր դպրոցներում եղել է 1 կին, բարձր արհեստանոցում 8 և ստոր արհեստանոցներում 4 ուսուցչուհիներ։ Արուեստանոցում եղել են 4 ուսուցչուհի և 114 աշակերտուհիներ։ Բարձր արհեստները սովորում են 51 կին։ Բազմարուեստեան դպրոցում ուսանում էին 4 կին, և այն և այն և այն։

Շատ տեսակ-տեսակ դպրոցներ կան իգական սեռի համար թէ մասնաւոր անձինքներից, թէ պետութիւնից հիմնված։ Տեղ-տեղ կան մասնագիտական դպրոցներ, օրինակի համար ոստայնագործական, խոհարարական, փայտագործական, կաթնագործական, հիւանդապահական, մանկաբարձական, գծագրական, նկարչական, երաժշտական և այլն։ Մի տեսակ դպրոց կայ, որ չենք ուզում միայն անունը յիշելով անցնել. դա տանտիկին պատրաստող դպրոցն է։ Այդ դպրոցի ընթացքը միայն մէս է։ Այդտեղ սովորում է կինը այն բոլորը, ինչ որ տանտիկնոջ պէտք է,—ոստայնի գործ, ձեռագործ և խոհարարութիւն, մի քիչ պարտիզպանութիւն, առողջաբանութիւն, հաշուպահութիւն, ընկերաբանութիւն (Gesellschaftslehre), գրականութիւն, մարմնամարզութիւն և երգ։ Ամբողջ ընթացքի համար վճարում են 17 մարկ։

Դեղարուեստներով և քանդակագործութեամբ զբաղվող կանանց և օրիորդների թիւը չատ մեծ է։ Էլէն Ֆավորին, Ա. Լունդալ կատարելագործվել են իբրև նկարիչ Դիւսսելդորֆում, Մինխենում և Պարիզում։ Մարիա Վեբ, Հաննա Ֆրօստերուս, Նինա Ալստէդ և ուրիշ չատերը արուեստանդէսներում մրցանակներ ստացող նկարիչներ են։ Կան և քանդակագործ կանայք մի քանիսը։

Երգչուհիներ ու երաժիշտներ, որ մի քանի հարիւր տարի սրանից առաջ այս երկրում, պատմութեան նայելով, ամենախայտառակ անձինք էին, հիմա ամենայարգելի տեղ են բռնում հասարակութեան և բոլոր լուսաւոր աշխարհի մէջ, օրինակի համար, Ռուսաստանում ծանօթ երգչուհի Ալմա Ֆուստրէմ և ուրիշ չատերը։ Այստեղ ծնված և մնած Ագնէս Զէզուլին այժմ ջութակի պրոֆէսոր է Անգլիա։ Նատալիա Բէրզը ֆրանսէզներ, վալսեր և մէկ էլէգի է հնարել, որ մի ժամանակ սիրով ածում և երգում էին։ Եւ հիմա չատ նորահաս օրիորդներ կատարելագործվում են Իտալիայում։ Թատերաբեմի վրա եղողների թիւն էլ մեծ է, որոնց մէջ նշանաւոր է Իդա Ալբերդ, որին կոչում են ֆինն Էլէոնորէ Դուզէ։

Մի մեծ չարք էլ գրողներ և հեղինակներ կան, որ թէ մեծ և թէ փոքր երկասիրութիւններ ունեն հրատարակած և ամեն տարի էլ նորանոր աշխատութիւններ են հրատարակում, ոտանաւոր կամ արձակ, պարզ կամ պատկերազարդ։ Երեխաների համար չատ սիրուն թերթեր են լոյս ընծայվում կանանց և օրիորդների ձեռքով։

Եթէ մի որ և է նիւթի մասին մէկը աւելի մանրամասն և բաղմակողմանի տեղեկութիւն ուզենայ իմանալ, խնդրում եմ, «Մշակի» միջոցով դիմել ինձ, ուրախութեամբ պատրաստ եմ ծառայելու։

Ա. Ա.

գործերն են կատարում։ Քանի քանի աղջիկներ գիտենք, որոնք պառաւ մայր են պահում և ուսանող եղբօրն էլ ապրուստի կէսը վճարում։ Եկէք, տեսէք և ուրախացէք։ Նոյն իսկ սենատում չատ կանայք ու օրիորդներ կը տեսնէք, որոնք նոյնչափ վարել գիտեն գրիչը, որքան կողքին նստած «տայնիկ սովէտնիկը»։ Ճանաչում ենք այնպիսի կանանց, որ 25—30 տարի ծառայելուց յետոյ կենսաթոշակ (պէնսիա) են ստանում և հանգիստ ու անկախ ապրում իրանց ծերութեան օրերում։

Խիստ չատ տարածված է այստեղ և օրից օր աւելի է տարածվում հիւանդապահութիւնը։ Բոլոր վարչական և մասնաւոր հիւանդանոցներում հիւանդապահները իգական սեռից են։ Մեծապէս կը սխալվի ընթերցողը, որ կարծէ թէ դրանք մեր Կովկասի հիւանդանոցների «սիդէլկաներն» են, որ 10—15 ռուբլով վարձվում են փողոցից։ Սրանք բոլորն էլ, առանց բացառութեան, ուսած, կրթված են միջնակարգ դպրոցներում և մի ամբողջ տարի էլ լսել են հիւանդապահութեան ընթացքը։ Հիւանդանոցներում ունեն իրանց առանձին մաքուր և կոկիկ սենեակ, ստանում են բոլորը ամսական 50—100 մարկ, այսինքն 20—40 ռուբլի։—Ծաղիկ պատուաստողներ ամբողջ Ֆինլանդիայում կանայք են։ Մանկաբարձներ, մասսաժիստներ, հիւանդներին մարդողներ, գիմնաստիկ քոյրեր, բժշկուհիներ, աչքաբոյժներ և ատամնաբոյժներ օրէցօր չատանում են։

Ֆինլանդիայից այլ և այլ տեղերում 283 կանայք ընտրված են համայնքներից իբրև միջնակարգ դպրոցների և միւս ուսումնարանների տեսուչներ և հոգաբարձուներ. 125 կանայք կառավարում են աղքատախնամ ընկերութիւններ։ Պոլիցիայում, դումաներում, դատարաններում, նոտարական գրասենեակներում, ընթերցարաններում և գրադարաններում պաշտօն ունեցող կանանց թիւն էլ միշտ աճելու վրա է։

Կառավարութեան պաշտօնատեղերից մի քանիսը միայն յիշենք։ Պոստի բարձրագոյն վարչութեան մէջ կան 10 կանայք, որոնք ստանում են 1,200—2,800 մարկ տարեկան ռոճիկ։ Ընդհանուր նահանգապետի գիւանատանը ծառայում են 3 կանայք, Կայսերական սենատում 51, վիճակագրական բիւրոյում 5, Վիբորգի նահանգական դատարանում 3, անտառավարչութեան մէջ 3, հողաչափական վարչութեան մէջ՝ 12, հաշորդակցութեան վարչութեան մէջ՝ 3, Աբոյի դատարանում 3, Վազայի դատարանում 4, լուսաւորութեան վարչութիւնում 3, օդերևոյթաբանական կենտրոնական վարչութեան մէջ 7, մաքսատան մէջ 15, և այլն և այլն, բոլորը 155 հոգի։ Բացի դրանից 280 կանայք գտնվում են աւելի ցած պաշտօններում, 253 անձինք պօստայի գործերում, 54 հոգի բանտերում և 107 կանայք երկաթուղիներում վարում են պետական պաշտօն։ Ընդամենը 849 կանայք, որոնցից 687 չամուսնացած, 62 արամբի և 100 այրի են։

Այժմ դառնանք, գէթ համառօտ կերպով, իգական սեռի կրթութեան վիճակին տարրական ուսումնարաններից սկսած մինչև համալսարանը։ Քաղաքներում և գիւղերում կային 1872 թվին 153 ժողովրդական դպրոցներ 3 կամ 4 դասարաններով աղջկերանց համար, 92 վարժուհիներով և 3,420 աշակերտուհիներով. իսկ 1895 թվին 500-ից աւելի դպրոցներ ունեն 34,568 աշակերտուհիներ։ Դրանցից զատ և մասնական պարտէզներում 458 մանուկներ, սեմինարներում 321 օրիորդ, և գիմնազիաներում 1550 աշակերտուհի։ Խառն դպրոցներ, որոնք համալսարանի համար ուսանողներ են պատրաստում, ունեն 1,092 աշակերտուհիներ։ Այս վերջին տեսակ դպրոցները անցեալ 1895 թվին նպաստ են ստացել պետութիւնից 145,250 մարկ։

Անցեալ 1895 թվի ընթացքում համալսարան մտնելու քննութիւն են տուել 59 անձինք իգական սեռից. մի կին սկզբնական քննութիւն տուեց բժշկական ֆակուլտէտը մտնելու. մի կին վերջնական քննութիւն տուեց իբր դաստիարակապետ. մի կին բժշկականութեան և վիրաբուժութեան բժշկապետի աստիճան ստանալու համար աջողութեամբ պաշտպանեց իր դիսերտացիան։

Ջեռագործի բարձր դպրոցներում եղել է 1 կին, բարձր արհեստանոցում 8 և ստոր արհեստանոցներում 4 ուսուցչուհիներ։ Արուեստանոցում եղել են 4 ուսուցչուհի և 114 աշակերտուհիներ։ Բարձր արհեստները սովորում են 51 կին։ Բազմարուեստեան դպրոցում ուսանում էին 4 կին, և այն և այն և այն։

Շատ տեսակ-տեսակ դպրոցներ կան իգական սեռի համար թէ մասնաւոր անձինքներից, թէ պետութիւնից հիմնված։ Տեղ-տեղ կան մասնագիտական դպրոցներ, օրինակի համար ոստայնագործական, խոհարարական, փայտագործական, կաթնագործական, հիւանդապահական, մանկաբարձական, գծագրական, նկարչական, երաժշտական և այլն։ Մի տեսակ դպրոց կայ, որ չենք ուզում միայն անունը յիշելով անցնել. դա տանտիկին պատրաստող դպրոցն է։ Այդ դպրոցի ընթացքը միայն մէս է։ Այդտեղ սովորում է կինը այն բոլորը, ինչ որ տանտիկնոջ պէտք է,—ոստայնի գործ, ձեռագործ և խոհարարութիւն, մի քիչ պարտիզպանութիւն, առողջաբանութիւն, հաշուպահութիւն, ընկերաբանութիւն (Gesellschaftslehre), գրականութիւն, մարմնամարզութիւն և երգ։ Ամբողջ ընթացքի համար վճարում են 17 մարկ։

Դեղարուեստներով և քանդակագործութեամբ զբաղվող կանանց և օրիորդների թիւը չատ մեծ է։ Էլէն Ֆավորին, Ա. Լունդալ կատարելագործվել են իբրև նկարիչ Դիւսսելդորֆում, Մինխենում և Պարիզում։ Մարիա Վեբ, Հաննա Ֆրօստերուս, Նինա Ալստէդ և ուրիշ չատերը արուեստանդէսներում մրցանակներ ստացող նկարիչներ են։ Կան և քանդակագործ կանայք մի քանիսը։

Երգչուհիներ ու երաժիշտներ, որ մի քանի հարիւր տարի սրանից առաջ այս երկրում, պատմութեան նայելով, ամենախայտառակ անձինք էին, հիմա ամենայարգելի տեղ են բռնում հասարակութեան և բոլոր լուսաւոր աշխարհի մէջ, օրինակի համար, Ռուսաստանում ծանօթ երգչուհի Ալմա Ֆուստրէմ և ուրիշ չատերը։ Այստեղ ծնված և մնած Ագնէս Զէզուլին այժմ ջութակի պրոֆէսոր է Անգլիա։ Նատալիա Բէրզը ֆրանսէզներ, վալսեր և մէկ էլէգի է հնարել, որ մի ժամանակ սիրով ածում և երգում էին։ Եւ հիմա չատ նորահաս օրիորդներ կատարելագործվում են Իտալիայում։ Թատերաբեմի վրա եղողների թիւն էլ մեծ է, որոնց մէջ նշանաւոր է Իդա Ալբերդ, որին կոչում են ֆինն Էլէոնորէ Դուզէ։

Մի մեծ չարք էլ գրողներ և հեղինակներ կան, որ թէ մեծ և թէ փոքր երկասիրութիւններ ունեն հրատարակած և ամեն տարի էլ նորանոր աշխատութիւններ են հրատարակում, ոտանաւոր կամ արձակ, պարզ կամ պատկերազարդ։ Երեխաների համար չատ սիրուն թերթեր են լոյս ընծայվում կանանց և օրիորդների ձեռքով։

Եթէ մի որ և է նիւթի մասին մէկը աւելի մանրամասն և բաղմակողմանի տեղեկութիւն ուզենայ իմանալ, խնդրում եմ, «Մշակի» միջոցով դիմել ինձ, ուրախութեամբ պատրաստ եմ ծառայելու։

Ա. Ա.

կենտրոնական ընդհանուր ժողովի նիստի, որ տեղի ունեցաւ կիրակի օրը, ամսոյս 25-ին։

Լինելով քարտուղար ընդհանուր ժողովի՝ հարկ եմ համարում յայտնել, որ այդ հաշիւը չէ ներկայացնում օբյեկտիվ պատկեր յիշեալ ժողովի, այլ գունաւորված է անձնական համակրութեան կամ հակակրութեան զգացմունքով և պարունակում է խիստ շատ աղաւաղումներ և յեղաշրջումներ։

Սա. Մալխասեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հաստատ աղբիւրից տեղեկանում ենք, որ երկրագործութեան մինիստրութիւնը, քննելով բոլոր այն խնդիրները, որ տրված էին մինիստրին Կովկասում երկրագործական դպրոց և պոլիտեխնիկում հիմնելու համար, և աչքի առաջ ունենալով, որ Թիֆլիսի չերամապահական կայարանը և այգեգործական դպրոցը չեն համնում լիակատար կերպով իրանց նպատակին, որոշել է բանալ մի միջնակարգ գիւղատնտեսական ուսումնարան Թիֆլիսում, փակելով չերամապահական կայարանը և այգեգործական դպրոցը։

—

Մեզ հաղորդում են, թէ Վեհափառ Կաթողիկոսը կարգադրել է, որ հայոց բոլոր թեմական և ծխական դպրոցներում հարցաքննութիւնները պէտք է վերջանան թաղադրութեան ատիթով մինչև մայիսի 11-ը։

—

Երևանի նոր նշանակված նահանգապետ կոմս Տիզենհաուզենի մասին «Нов. Обозр.» լրագիրը հետեւեալ կարճառօտ կենսագրական տեղեկութիւններ է հաղորդում։ Կոմս Տիզենհաուզէն իր ամբողջ ծառայութիւնը կատարել է Կովկասում։ Իր ուսումն աւարտելով Դորպատի համալսարանում, նա 1868 թուին կանչվեց Անդրկովկասեան երկիրը, ուր սկզբում նշանակվեց Քութայիսի զինուորական նահանգապետի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ, և ապա կատարել է Քութայիսի նահանգական վարչութեան դիւանատան կառավարչի և խորհրդականի պաշտօնները։ 1876 թուին կոմս Տիզենհաուզէն նշանակվեց Սղնախի գաւառապետ, իսկ 1888 թուին նոյն պաշտօնով փոխադրվեց Ախալցխա։ Նոյն թուին կոմս Տիզենհաուզէն Երևանի փոխ-նահանգապետ նշանակվեց, ուր երեք տարի մնալուց յետոյ փոխադրվեց նոյն պաշտօնով Թիֆլիս։ 1890 թուին կոմս Տիզենհաուզենին Բարձրագոյն հրամայված է Սղնախ քաղաքի պատուաւոր քաղաքացու կոչումն ընդունել։ Մեր կողմից կարող ենք աւելացնել, որ կոմս Տիզենհաուզէն լաւ յիշատակներ է թողել այն բոլոր տեղերում, որտեղ պաշտօն է վարել։

—

Մեզ հաղորդում են, որ լուսաւորութեան մինիստրութիւնը ներկայ 1896 թուից նշանակել է մշտական նպաստ՝ մի քանի դպրոցներին կից գիւղատնտեսական դասընթացք բանալու համար.—Ախալքալաքի, Ախալցխայի և Ներքին Մաշխանայի դպրոցներին՝ տարեկան 1000 բուբլի, Վաղենցովկայի և Բվէ-Մաչալայի դպրոցներին տարեկան 500-ական բուբլի։ Ախալքալաքում և Վաղենցովկայում անցնելու են կաթնատնտեսական գիտութիւն, իսկ միւսներում այգեգործութիւն։ Երկրագործութեան մինիստրութիւնը իր կողմից աւելացրել է Ախալցխայի դպրոցի համար 500 բուբլի։ Եկող 1897 թուին մտադրութիւն կայ 500-ական բուբլի նոյն նպատակով յատկացնել Ծալկայի, Շուլավերի, Ջալալօղլու, Գամբորի և Ալիի դպրոցներին։

—

Ինչպէս յայտնի է, վերջին ժամանակները Ռուսաստանից արտասահման գնացած շատ կանայք ուսանում են բժշկութիւն, բայց վերադառնալով հայրենիք չեն կարողանում ստանալ բժշկութեան իրաւունք։ «Врачъ» լրագիրը այժմ հաղորդում է իբրև լուր, որ արտասահմանեան բժշկական դիպլոմ ունեցող կանանց պէտք է թոյլ տրվի հարցաքննութիւն տալ յատուկ յանձնաժողովում, եթէ միայն նրանք նախօրօք կարողանան աջողութեամբ հարցաքննութիւն տալ լատիներէն լեզուից այն չափով, որ սահմանված է կանանց բժշկական ինստիտուտ մտնելու համար, և այլ ևս չէ պահանջվելու ոչ յունարէնի գիտութիւն, ոչ էլ գիմնազիայի դասընթացի աւարտման վկայական։

—

Թիֆլիսում տեղեկութիւն ստացվեց, որ Մոսկվայում վախճանվել է այնտեղի երաժշտական կուրսերի հիմնադիր Նինա Կօրգանովա, յայտնի հայ կոմպոզիտոր Գենարի Կօրգանովի քոյրը, որը երաժշտական աշխարհում յայտնի էր Դարիալի անունով։ Հանգուցեալը իր երիտասարդութեան ժամանակ յայտնի երգչուհի էր, և երգել է եւրոպական բեմերից շատերի վրա։ Մի քանի տարի է արդէն, որ հանգուցեալը հիմնեց Մոսկվայում երաժշտական կուրսեր, ուր ձրի ուսանում էին և մի քանի հայ երիտասարդներ, որպէս թոշակաւորներ։

—

Քութայիսի զինուորական նահանգապետի օգնական գեներալ իշխան Բարիատինսկի, ինչպէս լսել են տեղական լրագիրները, Դաղստանի շրջանի զինուորական նահանգապետ է նշանակվում։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգում շատ են խօսում Մոսկվայի պրոթէսոր Զախարինի մի խոշոր նուիրաբերութեան մասին։ Հոչակաւոր պրոֆէսորը 50,000 ր. է նուիրել եկեղեցական ծիսական դպրոցներ հիմնելու համար։

—

Մի քանի ժամանակ առաջ, հարկային տեսուչ Ի. Կօրգանով առաջարկեց արհեստաւորների ժողովին հիմնել Թիֆլիսում աղքատանոց և հիւանդանոց զառամեալ և աշխատանքին անընդունակ արհեստաւորների, նրանց այրիների և որբերի համար։ Արհեստաւորները ուրախութեամբ ընդունեցին պ. Կօրգանովի առաջարկութիւնը և սկսեցին փող ժողովել իրանց մէջ։ Այժմ արդէն արհեստաւորները ժողոված ունեն մօտ 3,000 ր. և բացի դրանից պատրաստակամութիւն յայտնեցին ձրի բանել աղքատանոցի և հիւանդանոցի շինութեան կառուցման ժամանակ։ Հարկային տեսուչը այս օրերս դիմել է քաղաքային վարչութեանը՝ խնդրելով, որ քաղաքը իր հողերից մէկը յատկացնի այդ նպատակին։

—

ԳԱՆԶԱԿԻՑ մեզ գրում են. «Այստեղ օպերային ներկայացումներ է տալի Թիֆլիսի օպերային խմբի անդամներից կազմված մի խումբ՝ Տրուֆֆիի ղեկավարութեամբ։ Ներկայացումները տեղի ունեն առանց օրկեստրի մասնակցութեան։ Ներդաշնակութիւնը կատարվում է դաշնամուրի միջոցով։ Բացակայ է նոյնպէս խօրային երգեցողութիւն։ Հասարակութեան այն մասը, որ կարօտութիւն է զգում օպերային երգեցողութեան, բաւականանում է նոյն իսկ այդպիսի թերի կազմութեամբ, և ուրախութեամբ յաճախում է ներկայացումները»։

—

ԴԱՂԷԹԻՑ մեզ գրում են. «Մեր տանուտէրի պաշտօնական գրութեան հիման վրա, նահանգապետի կարգադրութեամբ, ամսոյս 20-ին այցելեց մեր գիւղը նահանգական բժշկի օգնական Մաչավարիանի, երեք բժիշկների հետ։ Այդ օրը 160 երեխաներ պատուաստեցին, բայց պատուաստման նիւթը վերջացաւ և շատ երեխաներ մնացին առանց պատուաստելու։ Բժիշկը տնէտուն շրջեց, ախտահանութեան համար հարկաւոր միջոցները ցոյց տալով և ժողովրդին յորդորեց, որ այսուհետև անտարբեր չը լինեն այսպիսի դէպքերում։ Բժշկի արձանագրութիւնից երևաց, որ յունվարի 12-ից մինչև փետրվարի 20-ը երկու հարիւր երեխայ ծաղիկ են ընկել և անշնաս ազատվել, մօտ 160 դեռ պառկած են, 30 մեռել են»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 20-ին այստեղ բացվեց Բագուի նահանգական դատարանի քրէական բաժինը։ Քննելի գործերի թիւն է 65։ Դատարանի բաժինը այստեղ կը մնայ մինչև մարտի 16-ը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մի մանաւոր նամակով Վիեննայից գրում են, որ Ֆրանց-Յովսէփ կայսրը նուիրեց 1,000 ֆրանկ յօգուտ սովատանջ Թիւրքաց հայերի։ Այդ փողը կայսրը յանձնեց Մխիթարեան միաբանութեան, որը հանգանակութիւն է բացել յօգուտ սովեալների և կարօտեալների։

—

Մեզ գրում են Կ. Պոլսից, փետրվարի 20-ից. «Գարակէօղեաններուն խնդիրը նորէն օրուան խնդիր է եղած է և տեղի կուտայ նորանոր յուզումներու։ Գրիգոր Գարակէօղեան ուղղակի պալատ գնալով, կը խնդրէ, որ իր անձը պաշտպանութեան ներքև առնեն։ Հիմակ Գրիգոր Գարակէօղեան փողոցները կը պտտէ զինուած ալպանիացիի մը հետ. հեռուէն կը հետեւեն մէկ երկու ծպտուած ոստիկաններ»։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Հայ-կաթոլիկ ազգայիններուն ունեցած նախանձը և եռանդը շատ օրինակելի է. կը լսենք, թէ դիմումներուն սիրով կը պատասխանեն, և պատկառելի գումարներ կը նուիրեն հայերուն օգնելու համար»։

—

Կ. Պոլսից հեռագրում են. «Թիւրքաց կառավարութիւնը հաւատացնում է, որ Ադանայի ընդհարումը ծագել է երկու հարբած մարդու կռիվ պատճառով և սպանվել է 20 հայ։ Մերսինայի ֆրանսիական փոխ-հիւպատոսը հրահանգ է ստացել՝ ճիշդ տեղեկութիւններ ժողովել այդ մեծ ընդհարման մասին։ Պետութիւնների դեսպանները դարձրել են Բ. Դրան ուշադրութիւնը Այնթապի ծանր վիճակի վրա։

—

Անգլիական համայնքների ժողովում պատգամաւոր Պիզ հարցնում է, թէ ինչ է մտածում կառավարութիւնը՝ Փոքր-Ասիայի խաղաղացնելու գործը Ռուսաստանին յանձնելու խնդրի մասին։ Բալֆուր պատասխանեց, որ կառավարութիւնը այդպիսի հարցով երբէք չէ զբաղվել։

—

Ռուսաց գործակալութիւնը հաղորդել էր, որ Զէյթունում մեծ թիւով հիւանդ և չքաւոր փախստականներ կան։ Անգլիական նպաստող ֆոնդը ուղարկել է Զէյթունի խեղճերին օգնելու համար հինգ հազար ֆունտ ստէրլինգ։ Յանկութիւն կար ուղարկել Զէյթուն բժիշկներ՝ հիւանդներին խնամելու և ճարտարապետներ՝ հիւանդանոցներ կառուցանելու համար, սակայն Թիւրքաց կառավարութիւնը անցեալ ուղղի տալը դժուարացնում է։

—

«Daily News» լրագրում կարդում ենք. «Մի մահմէտականացած հայ, որ յայտնի էր եւրոպացիների շրջանում և շատ յարգված էր ամերիկացի և անգլիացի միսիոնարներից, երկար սպասելուց յետոյ գրել է մի նամակ, որի մէջ յայտնում է, թէ երբ Թիւրքերը կողոպտեցին ամեն բան, առաջարկեցին նրան կամ ընդունել մահմէտականութիւն ամբողջ ընտանիքով, կամ հանդիսատես լինել, թէ ինչպէս իր առաջ կը կոտորվեն իր կինը և երեխաները։ Նա գերադասեց իր վրա գցել սպիտակ տիրքանը, և այժմ ամեն օր կանոնաւոր յաճախում է մզկիթ։ Մահմէտականացածները մինչև այժմ դեռ չեն կարողանում իրանց դանդաղները տեղ հասցնել»։

—

Լոնդոնից հեռագրում են փետրվարի 21-ից «Новое Время» լրագրին.

«Պարլամենտական վիճաբանութիւնները հայոց հարցի առիթով բոլոր անգլիացիների վրա շատ ծանր տպաւորութիւն գործեցին։ Այդ վիճաբանութիւնները շատ պարզ կերպով ցոյց տուեցին անգլիական քաղաքականութեան կատարեալ անաջողութիւնը Կ. Պոլսում և Ռուսաստանի տիրապետող ազդեցութիւնը եւրոպական արևելքում։ Արտաքին գործերի մինիստրի օգնական կէրզոն մասնացոյց էր անում այն հանգամանքի վրա, թէ Անգլիայի ունեցած դիտաւորութիւնը և ծրագիրը՝ ստիպողական միջոցներ ձեռք առնել Թիւրքաց կառավարութեան դէմ, խանգարվեցին Ռուսաստանի կողմից, որին այդ դէպքում աջակցում էին բոլոր միւս եւրոպական պետութիւնները, ոմանք՝ բացայայտ կերպով, իսկ ոմանք՝ ծածուկ։

«Times» լրագրի կարծիքով, այժմեան պահպանողական մինիստրութիւնը արևելեան հարցում ամենևին աւելի շատ ճարպիկութիւն և կարողութիւն ցոյց չը տուեց, քան նախկին աղատամիտ կաբինէտը։ Յայտնի երդուեալ ռուսատեաց Աշմէտ Բարտէտ առաջարկեց պալատին՝ հրաւիրել կառավարութիւնը վերադառնալ լորդ Բիկոնսֆիլդի քաղաքականութեան, որ յայտնապէս թշնամական էր Ռուսաստանի վերաբերմամբ. բայց երբ Բարտէտ ասեց, թէ Թիւրքիայում աւելի աղատութիւն և ներողամտութիւն կայ, ամբողջ պարլամենտը թնդաց բարձր քրքիջներով։ Բարտէտ ստիպվեց յետ առնել իր առաջարկութիւնը

«Ազատամիտ կուսակցութեան կլուբում, մարկիզ Ռոզբէրի արտասանեց մի ճառ, որի մէջ ասեց հետեւեալը. «Եթէ մենք իր ժամանակին մինչև երկինք բարձրացրինք Բերլինի դաշնագրի հերոսներին—լորդ Բիկոնսֆիլդին և մարկիզ Սալիսբուրիին,—իրաւունք ունենք այսօր պախարակել Ռուսաստանին նրա համար, որ նա մերժեց արևելքում միջոցներ ձեռք առնել՝ այդ դաշնագրի հեղինակների մէկի մասնակցութեամբ»։

—

Բէյռութի գործակալութեանը հեռագրում են Կ. Պոլսից, փետրվարի 28-ից.

«Մերսինայից եկած լուրերը հաստատում են, որ 15 հայեր սպանվել են և մի քանի հոգի էլ վիրաւորվել են Ադանայում փետրվարի 23-ին տեղի ունեցած խռովութիւնների ժամանակ։ Ռուսաց թարգմանի տունը կողոպտվել է։ Շատ հայեր ձերբակալվել են։ Կ. Պոլսում. կասկած կայ, որ նրանք յարաբերութիւն ունեն հայ յեղափոխական կոմիտէի հետ»։

—

Կ. Պոլսից հեռագրում են «Times» լրագրին, թէ բոլոր վեց դեսպանները հրամայեցին իրանց թարգմաններին՝ բողոքել այն բանի դէմ, որ Շէֆիք-բէյ մինչև այսօր մնում է բէֆիօրների գործադրութեան վերահսկող յանձնաժողովի նախագահի պաշտօնում։

Մի քանի յոյներ և հայեր ձերբակալվեցին այս օրերս Կ. Պոլսում, կասկածելով որ նրանք նոր խռովութիւններ են ուզում պատրաստել։

ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹԻՒՐՔԻԱ

—

Ինչպէս յայտնի է, «Երիտասարդ-Թիւրքիա» կուսակցութեան գլխաւոր կենտրոնը և ղեկավարները գտնվում են Եգիպտոսում և Ֆրանսիայում։ Թիւրքաց կառավարութիւնը ամեն ջանք գործ է դնում ձեռք գցելու այդ ղեկավարներին։ Ահա ինչ են գրում այդ մասին Պարիզից «Francfurter Zeitung» լրագրին։

«Երիտասարդ Թիւրքիայի կոմիտէը Պարիզում վաղուց իր վրա է հրաւիրել Թիւրքաց կառավարութեան ուշադրութիւնը։ Երկու ամիս առաջ կոմիտէը սկսեց հրատարակել «La jeune Turquie» («Երիտասարդ Թիւրքիա») անունով մի լրագիր։ Կոմիտէի ագիտացիային վերջ դնելու համար, Թիւրքաց կառավարութիւնը սկսեց ամեն տեսակ միջոցների դիմել։ Վերջերս նա ուղարկել է Պարիզ, Սուրուրի բէյին, կրթական գործի հետ ծանօթանալու պատրուակով, բայց իսկապէս այն նպատակով, որ կարողանայ համոզել կոմիտէի անդամներին ձեռք քաշել իրանց ագիտացիայից, խոստանալով մեծամեծ վարձատրութիւններ և պատուաւոր պաշտօններ։ Սակայն «Երիտասարդ Թիւրքիա» կուսակցութեան անդամները չը խաբվեցին։

Այն ժամանակ Թիւրքաց կառավարութիւնը դիմեց մի ուրիշ միջոցի։ Պարիզի համալսարանում միշտ գտնվում են մի քանի Թիւրք ուսանողներ, որոնք սովորում են կառավարութեան հաշիւով, և որովհետև նոյն համալսարանում դասախօսութիւններ են լսում և կուսակցութեան անդամներից շատերը, ուստի Թիւրքաց դեսպանը պահանջեց Ֆրանսիական կառավարութիւնից հայրենիք ուղարկել այդ անդամներին այն հիման վրա, որ իբր նրանք արդէն վերջացրել են իրանց ուսումը։ Սակայն երիտասարդ Թիւրքերը, իմանալով այդ մասին, իրանց միջոցները ձեռք առան և այցելելով արտաքին գործերի մինիստրին, յայտնեցին, թէ ուղարկել իրանց Ֆրանսիայից Թիւրքիա ոչ մի կարիք չը կայ, որովհետև առաջին՝ իրանք յեղափոխականներ չեն և երկրորդ՝ եթէ իրանց ուղարկեն Կ. Պոլիս, այնտեղ իրանց սպատում է կամ բանտ, կամ ծովի յատակը։ Դժուար թէ Ֆրանսիական կառավարութիւնը համաձայնվի կատարել Թիւրքաց դեսպանի պահանջը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Nord» լրագիրը հաղորդում է, որ Կօբուրգեան Ֆերդինանդ պրինցը մի քանի օրից յետոյ կերթայ այցելութիւն գործելու այն պետութիւնների միապետներին, որոնք ստորագրել են Բերլինի դաշնագիրը։ Պրինցը առաջ կերթայ

Կ. Պոլիս և Պետերբուրգ, ապա Բերլին, Վիեննա, Պարիզ, Լոնդոն և Հռոմ։ Պրինցին կուղեկցի Սատնչէվ։

—Վիեննայում հետևեալ մանրամասնութիւններ են ստացված Կրիտէում տեղի ունեցած անկարգութիւնների մասին։ Նէօկտրօում և Կանէյում յարձակվեցին քրիստոնեաների վրա այն պատճառով, որ Սելինօում փոքր էր եղել սպանել ժանդարմների գնդապետին, մի փոքր, որ անաջող անցաւ։ Երբ կռուի ժամանակ սպանվեցին երկու քրիստոնեաներ և թիւրքաց մի ժանդարմ, իսկոյն հաւաքվեց ժողովրդի ահագին բազմութիւն։ Երկու մեծ խմբերի բաժանվելով, քրիստոնեաները և մահմեդականները դիմեցին դէպի գիւղերը։ Կառավարութիւնը դիտաւորութիւն ունի զինաթափ անել Կրիտէի ազգաբնակութիւնը, բայց հաղիւ թէ այդ նրան աջողվի, որովհետև ժանդարմի պաշտօնեաները Կրիտէում 15 ամիս չարունակ ռոճիկ չեն ստանում։ Կրիտէի դպրոցների բոլոր ուսուցիչները, ռոճիկ չը ստանալու պատճառով, հրաժարվեցին չարունակել իրանց զբաղմունքները։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 փետրվարի։ Անուանական բարձրագոյն ուկազ։ «Մեր սիրեցեալ Ծնողը իր իմաստուն կառավարութեամբ, առանց մերկացնելու սուրը, անյողդողդ տանում էր Մեր թանգագին հայրենիքը փառաւոր ճանապարհով։ Մտցնելով ամեն տեղ խաղաղութիւն և հանգստութիւն, թողեց Նա իր օրհնեալ անունը յաւիտեան իր հաւատարիմ ժողովրդի սրտում։ Ի յիշատակ անմոռանալի խաղաղաբար թագաւորի—այժմ, Նրա ծննդեան 51-դ տարեդարձին, Մենք հիմնեցինք հանդուցեալ Կայսրի աշխատակիցների համար՝ նրա կառավարչութեան գործերում՝ արծաթէ մեդալ Մեր Ծնողի պատկերով։ Եւ թող նա միշտ յիշեցնէ մեզ Ինքնակալ Առաջնորդի փայլուն պատկերը, որը չէր խնայում իրան հայրենիքի բարօրութեան համար։»

Այդ մեդալը սահմանված է կրծքի վրա կրելու համար, Ալէքսանդր Նէվսկու ժապաւէնի վրա։

ՀՌՕՄ, 26 փետրվարի։ Հրատարակված է 189 օֆիցէրների ցուցակը, որոնք կենդանի են մնացել փետրվարի 18-ի պատերազմից յետոյ, նոյնպէս 5 օֆիցէրների, որոնք գերի են տարված։

ՀՌՕՄ, 26 փետրվարի։ Թագաւորը յանձնեց գեներալ Բիկօտտիին նոր մինիստրութեան կազմակերպութիւնը։ Գեներալը իսկոյն համաձայնութիւն կը կայացնի մարկիզ Բուդինիի հետ և կառաջարկի Նրան մինիստր-նախագահի պաշտօնը։ Ցոյս ունեն, որ վաղը արդէն կազմակերպված կը լինի մինիստրութիւնը։

Կ. Պոլիս, 26 փետրվարի։ Իշխան Ֆէրդինանդի Կ. Պոլիս գալը սպասվում է մարտի 13-ին, բայց հնարաւոր է, որ Նրան Բօլգարիայի իշխան ճանաչելու ֆիրմանը աւելի վաղ կուղարկվի Նրան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի։ Փետրվարի 26-ին ի Տէր հանդուցեալ Կայսր Ալէքսանդր III-ի ծննդեան օրը, Պետրոպավլովսկի տաճարում հոգեհանգստեան պատարագ մատուցվեց։ Ներկայ էին Թագաւոր Կայսրը, Մարիա Ֆէոդորովնա և Ալէքսանդրա Ֆէոդորովնա Կայսրուհիները, Մեծ Իշխանները, Մեծ Իշխանուհիները և Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնա։ Յերեկվայ 2 ժամին նոյն տաճարում Պալլադի, Սերգի և Իոանիկի միտրոպոլիտները՝ սինոդի անդամների և հոգեւորականութեան հետ հոգեհանգիստ կատարեցին։ Տաճարը լի էր աղօթողներով։ Մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներում հոգեհանգստեան պատարագներ մատուցվեցին և հոգեհանգիստներ կատարվեցին։

ՀՌՕՄ, 27 փետրվարի։ Հաղորդում են, որ աչքի առաջ ունենալով Իտալիային պատճառած խորին վիշտը, թագաւորը հրամայեց բոլոր տօնախմբութիւնները վերացնել մարտի 2-ին, իր ծննդեան օրը։

ԼՕՆԴՕՆ, 27 փետրվարի։ Իտալական ճգնաժամի մասին «Standard» լրագրում տպված է մի յօդուած, որի մէջ, ի միջի այլոց ասված է. «Այլ ես երեքպեսեան դաշնակցութեան գոյութիւնը կասկածելի է երևում, բայց այդպիսի հետևանքը զոհութիւն չէ պատճառում Անգլիային։ Ոչ մի տեղ, ընդհակառակն, այնպէս չեն ցաւում Իտալիայի անաջողութեան համար, որքան Անգլիայում, որը չէ կարող ցանկանալ երեքպեսեան դաշնակցութեան լուծումը։

ԼՕՆԴՕՆ, 28 փետրվարի։ «Times» լրագրին հեռագրում են, որ բայրամի տօներից առաջ Զէյնի-փաշան մեծ վիզիր կը նշանակվի, իսկ Զիա-փաշա արտաքին գործերի մինիստր։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Փետրվարի 27-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ	. .	93 ր.	90 կ.
Բերլինի վրա 100 մարկ —	. .	45 »	$77\frac{5}{8}$ »
Պարիզի վրա 100 ֆրանկ —	. .	37 »	20 »
Ոսկի — — արժէ	. .	7 »	50 »
Մաքսային կուպօններ —	. .	149 »	— »
Բօրսային դիսկօնտ —	. .	$7\frac{1}{2}$ »	— »
4% պետական բէնտա	. . . . .	98 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.		$283\frac{1}{2}$ »	— »
— — երկրորդ —		$258\frac{1}{2}$	—
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		218 »	25 »
5% պետական երկաթուղ. բէնտա.		100 »	— »
4% Ներքին փոխառութեան	. . .	$97\frac{3}{4}$ »	— »
$4\frac{1}{2}$% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		$100\frac{3}{8}$ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ			
$4\frac{1}{2}$% վկայակ. գիւղ. հող. բանկի		$100\frac{1}{8}$ »	—
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.		— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրլիգացիաները.		101 »	75 »
Մոսկվայի քաղաք. օրլիգացիաներ.		102 »	— »
Օդէսայի — —		100 »	50 »
Թիֆլիսի — —		$98\frac{1}{2}$ »	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6% —	. .	100 »	50 »
5% — — —	. .	99 »	— »
Քութայիսի — 6%	. .	100 »	50 »
5% — — —	. .	99 »	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
ԼԻՄՕՆԻ ԾԱՌԵՐ
լիմոնները վրան

Պայմանների մասին ցանկացողները պէտք է դիմեն այս հասցէով. Тифлисъ, Авлабаръ. Бѣльская улица (близъ армянскаго кладбища) № 21, Францу Берцу. 1—1

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Երկուշաբթի, մարտի 4-ին
ՕՐ. Ե. ԱԽԱՇԵԱՆ
Բարեհաճ մասնակցութեամբ պ.պ. Յ. Աբէլեանի, Տէր-Դաւթեանի, Թատերասէր Գանջումեանի և դերասանական խմբի անդամների կը տայ
Դրամատիքական-զրական երեկոյթ
ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ
Դրամա 4 արար. հեղ. Բ. Բիէբսոնի
Սկիզբն է 8 ժամին
Տեղերի գինը դրամատիական է
1—2 Բէժիսեօր Յ. Աբէլեան

ԼՈՒՄԱՅ
ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ
ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ
ԳԻՆՆ Է 60 ԿՕՊ.
Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарьянцу. ԹԻՖԼԻՍՈՒՄ վաճառվում է նաև կենտրոնական և կովկասեան գրավաճառանոցներում։ ԲԱԳՈՒՈ ծախվում է Շիրազեանցի գրախանութում։
(№ 64) 3—5

ԹԻՖԼԻՍԻ ԿԱԴԵՏԱՅԻՆ ԿՕՐՊՈՒՍԻ
ՊԱՐԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉ
ԳԼԻՆՍԿԻ
Յանկացողների համար սովորել պարահանդիսային պարեր գարնան համար ես նշանակել եմ դասընթաց այս տարվայ մարտի 1-ից մինչև մայիսի 15-ը։ Առաջարկում եմ յայտնել և գրվել ոչ ուշ մարտի 1-ից, որպէսզի նոր մրցող աշակերտուհիների և աշակերտների ուսուցումը կարելի լինի միաժամանակ սկսել, որ շատ օգտակար է պարերի աւելի շուտ և հիմնաւոր ուսումնասիրութեան համար։ Վճարը չափաւոր է։ Աջողութիւնը անկասկած։ Սապերնայա փողոց, № 26։ (№ 15) 2—3

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ
պատրաստելու ամենալաւ սիստէմի պատկանող „ԴԱԴԱՆԻ“ կոչված ՓԵՏԱԿՆԵՐԸ։ ԳԻՆԸ 1 փետակին, իր բոլոր մասերով, 5 ռուբլի։
Հասցէն՝ ЕЛИСАВЕТПОЛЬ. Пчеловду Оганесу Оганесянцу.
(№ 24) 2—2

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամների, որ կիրակի, մարտի 3-ին, երեկոյեան ժամը ութ-ին 7-ին, Թիֆլիսի դումայի դահլիճում, կը կայանայ անցեալ ընդհանուր ժողովի նիստի շարունակութիւնը։ (№ 25) 1—2

ԿՐԱԿԻ ԴԷՄ ԳՈՅՔԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի գիտութիւն ապահովացնող անդամների, որ կանոնագրութեան § 37 հիման վրա, ընկերութեան գործերի 1895 թւի
ՀԱՇԻՒԸ ԳՐՔԵՐԻ ԵՒ ԴՈԿՈՒՄԵՆՏՆԵՐԻ
հետ բաց է քննութեան համար վարչութեան բնակարանում, ցերեկվայ ժամը 12-ից մինչև ժամը 2-ը։ (№ 25) 1—2

ԳՐԱԴԱՐԱՆ—ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
(Սերգիեվսկայա փողոց, տուն Ալիխանեանի, № 16)
ԲԱՑ Է { Առաւօտեան ժամ 9—2, երեկոյեան 5—8 ժամ
Կիրակի և տօն օրերը առաւօտեան 9—12 ժամ
ՏՈՒՆ ՏԱՆԵԼՈՒ համար տրվում են ամսագիրներ, լրագիրներ և գրքեր։
ՎՃԱՐԸ տարեկան—4 ր., ամսական—40 կօպէկ, մուտքը—2 կօպէկ։
Կովկասագիտութեան և արևելագիտութեան համար կայ առանձին բաժին։
Ստացվում են՝ հայերէն 1) Մշակ, 2) Արձագանք, 3) Նոր-Դար, 4) Տարազ, 5) Աղբիւր, 6) Մուրճ, 7) Թատրոն, 8) Հօրիզոն, 9) Լումայ, 10) Արարատ, 11) Արաքս, 12) Հանդէս Ամսօրեայ, 13) Բաղմավէպ, 14) Շաւիղ, 15) Ծաղիկ, 16) Հայրենիք։
Ռուսերէն 1) Кавказъ, 2) Новое Обозрѣніе, 3) Тифл. Листокъ, 4) Кавк. Сельск. Хозяйство, 5) Новости, 6) Русскія Вѣдомости, 7) Новое Время, 8) Московскія Вѣдомости, 9) Биржевыя Вѣдомости, 10) Каспій, 11) Недѣля, 12) Нива, 13) Всемірн. Иллюстрація, 14) Петерб. Жизнь, 15) Лучъ, 16) Иверія (վրացերէն)։
Ռուսաց ամսագիրներ՝ 1) Русская Мысль, 2) Русское Богатство, 3) Міръ Божій, 4) Сѣверный Вѣстникъ, 5) Вѣстникъ Европы, 6) Книжки Недѣли, 7) Вѣстникъ, Иностранной Литературы, 8) Вопросы Философіи и Психологіи 9) Русскій Архивъ, 10) Новое Слово, 11) Новости Печати, 12) Воспитаніе и Обученіе. (№ 17) 4—4

ՆԱԽԱՁԳՈՒՇՈՒԹԻՒՆ
Մեծ պահանջը և ահագին հռչակը մեր հնարած
ԾԱՂԿԱՅԻՆ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆԻ
ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՕՆԻ ՆԿԱՐՆԵՐՈՎ
ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՓՈՇԻԻ
ԷԿՍՏՐԱԿՏ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵԱՍԱՄԱՆԻ ԵՒ ԲԼԶԵԴԱՅԻ ԾԱՂԻԿՆԵՐԻՑ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԿՂԻԿՆԵՐ և այլն
սարքում է մեզ հետ մրցողներին ՆՄԱՆԵՑՆԵԼ ոչ միայն անունները, այլ և մեր մասնագիտութիւնների ներքին սարքին, որպէս զի դրանով մոլորեցնեն հասարակութիւնը և այդպիսով մեծացնեն իրանց արդիւնքների վաճառումը, և այդ պատճառով խնդրում ենք պատուարժան գնողներին, մեր արդիւնքները գնելու ժամանակ, առանձին ուշադրութիւն դարձնել ֆիրմայի և գործարանական մարկայի վրա։
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
БИКъ БИКъ БРОКАРЪ и К° ВЪ МОСКВѢ. ФАБРИЧН. ШТЕМПЕЛЬ УТВЕРЖД. ПРАВИТЕЛ. 1864 г. 1864 г.
10—12 (№ 73—ամս.-25)

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ
Լուսանկար Տէր-Ղևոնդեանի մօտ վաճառվում են հետևեալ հայ գործիչների պատկերները՝
Հոգևորականներ.—հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ։ Ժամանակակիցներից՝ ՆԵՐՍԷՍ V, ԳԷՈՐԳ IV, ՄԱԿԱՐ և ՄԿՐՏԻՉ կաթողիկոսների, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷԱԹՃԵԱՆԻ (կաթողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ և ուրիշ արժանաւոր հոգևորականների։
Նոյն տեղը վաճառվում են.—ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ, ՐԱՖՖԻ, ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, ԾԵՐԵՆՑԻ, ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Պ. ԱԴԱՄԵԱՆԻ (բոլոր դերերում նկարված), ԹՄԲԱԳԻՐՆԵՐԻ, կենդանի ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՒՍԱԲԻ, ՄԱՐԻԱՄ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐԾՐՈՒՆԻ, «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ յօբելեանական ալբոմը, նմանապէս ուրիշ զանազան գործիչների լուսանկարները։
Վերոյիշեալ պատկերները արժեն՝ մեծագիր 3 ռուբլի, ՄԻՋԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 ռուբլի, ԿԱԲԻՆԷՏԱՅԻՆ կոչված պատկերները՝ 40 կօպէկ, ՎԻԶԻՏ կոչված պատկերները՝ 20 կօպէկ։
Հասցէն՝ ТИФЛИСЪ. Фотографія Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). Ճանապարհածախսը գնողի վրա է։ (№ 117) 5—10

ԿԱԿԱՕ ԲԼՕԿԼԻՐ
ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ, արկղիկներում, $1/1$, $1/2$, $1/4$ և $1/8$ կիլոգրամ։
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև։ Անտվերպէնի 1894 թւի համաշխարհային ցուցահանդիսում։
Գլխաւոր պահեստը՝ գեղարարական ապրանքների Բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում։ (№ 6) (Ե) 7—50

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը
	Գինը
1) ԻՎԷԼԻՆԱ, Գրիգոր Արծրունու	50 կօպ
2) ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ, Գ. Արծրունու	20 “
3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի	50 “
4) ՍԱՍՈՒՆ, Ա. Քալանթարի	20 “
Օտարաքաղաքացիները կարող են վճարը փողի տեղ ուղարկել պօստային մարկաներով։ (№ 59) 10—10

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Февраля 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 22